


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2016 թվականի հուլիսին


(վերլուծություն)

2016 թվականի հուլիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 14032 գործարք, որոնց քանակը 2016 թվականի հունիս ամսվա համեմատ նվազել է 5.3 %-ով, իսկ 2015 թվականի հուլիսի համեմատ՝ 13.8 %-ով:

2016 թվականի հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4006 օտարման գործարքի 73.4 %-ը կազմել է առուվաճառքը, 26.1 %-ը՝ նվիրատվությունը և 0.5 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 40.4 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 40.6 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2016 թվականի հուլիսին, 2016 թվականի հունիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքներն աճել են 5.0 %-ով, իսկ 2015 թվականի հուլիսի համեմատ՝ նվազել 13.1 %-ով:

2016 թվականի հուլիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 67.4 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2016 թվականի հուլիսին, 2016 թվականի հունիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 13.3 %-ով, իսկ 2015 թվականի հուլիսի համեմատ՝ նվազել 8.1 %-ով:

2016 թվականի հուլիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	հուլիս 2015 թ.	հուլիս 2016 թ.	հունիս 2016 թ.
Կենտրոն	428000	428250	428250
Արաբկիր	356600	357350	357300
Քանաքեռ-Զեյթուն	282700	283150	283100
Նոր Նորք	253250	254250	254200
Ավան	260700	261700	261700
Էրեբունի	252100	252350	252350
Շենգավիթ	257250	257700	257700
Դավթաշեն	276000	276750	276750
Աջափնյակ	250200	251000	251000
Մալաթիա-Սեբաստիա	243350	244100	244100
Նուբարաշեն	156800	157400	157350

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հուլիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի հունիսի համեմատ՝ աճել է 0.02%-ով:

2016 թվականի հուլիսին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 299 բնակարան, որոնց քանակը 2016 թվականի հունիսի համեմատ նվազել է 3.9 %-ով, իսկ 2015 թվականի հուլիսի համեմատ՝ 14.8 %-ով:

2016 թվականի հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		հուլիս 2015 թ.	հուլիս 2016 թ.	հունիս 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	116050	116050
	Այարան	57800	58500	58500
	Թալին	66200	66850	66850
Արարատ	Արտաշատ	97900	98900	98900
	Մասիս	115800	115800	115800
	Վեդի	101450	101750	101750
	Արարատ	76800	77550	77550
Արմավիր	Վաղարշապատ	154100	154200	154200
	Արմավիր	121200	121250	121250
	Մեծամոր	87550	87600	87600
Գեղարքունիք	Սևան	99400	99400	99400
	Գավառ	60100	60600	60600
	Մարտունի	107700	107700	107700
	Վարդենիս	44850	45300	45300
	Ճամբարակ	28700	28750	28750
Լոռի	Վանաձոր	88500	88600	88600
	Ստեփանավան	74600	74750	74750
	Սպիտակ	99800	99850	99850
	Ալավերդի	55300	55900	55900
	Տաշիր	47350	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20500	20500	20500
Կոտայք	Արվյան	155100	155150	155150
	Նոր Հաճն	128550	128550	128550
	Բյուրեղավան	108200	108250	108250
	Եղվարդ	109400	109900	109900
	Հրազդան	63800	63900	63900
	Ծաղկաձոր	292400	292400	292400
	Չարենցավան	85500	85500	85500
Շիրակ	Գյումրի	109250	109450	109450
	Արթիկ	66800	67300	67300
	Մարալիկ	40800	41100	41100
Սյունիք	Գորիս	122950	123750	123750
	Կապան	94100	95100	95100
	Սիսիան	91950	92200	92200
	Մեղրի	82050	83050	83050
	Ագարակ	47300	47750	47750
	Քաջարան	94600	94950	94950
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	95100	95100
	Եղեգնաձոր	125600	126250	126250
	Ջերմուկ	112950	113300	113300
Տավուշ	Դիլիջան	114000	115600	115600
	Իջևան	118400	118550	118550
	Բերդ	60300	60450	60450
	Նոյեմբերյան	50150	50400	50400
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի հունիսի համեմատ՝ մնացել է անփոփոխ:

2016 թվականի հուլիսին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 316 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 111 գործարք, մարզերում՝ 205 գործարք: 2016 թվականի հուլիսին, 2016 թվականի հունիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 16.4 %-ով, ընդ որում, Երևանում՝ աճել 8.8 %-ով, իսկ մարզերում՝ նվազել 25.7 %-ով: 2016 թվականի հուլիսին 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 22.9 %-ով, ընդ որում, Երևանում՝ 9.0 %-ով, իսկ մարզերում՝ 28.8 %-ով:

2016 թվականի հուլիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	հուլիս 2015 թ.	հուլիս 2016 թ.	հունիս 2016 թ.
Կենտրոն	476100	476350	476350
Արաբկիր	383000	383200	383200
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319300	319300
Ավան	270500	270600	270600
Էրեբունի	239750	239750	239750
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276100	276100
Աջափնյակ	250050	250100	250100
Մալաթիա-Սեբաստիա	238000	238100	238100
Նուբարաշեն	150800	150800	150800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հուլիսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի հունիսի համեմատ՝ մնացել է անփոփոխ:

2016 թվականի հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		հուլիս 2015 թ.	հուլիս 2016 թ.	հունիս 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136250	136250
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250

Արարատ	Արտաշատ	100000	100100	100100
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153150	153150
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94950	94950
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96200	96200
	Վարդենիս	41000	41150	41150
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100500	100900	100900
	Ստեփանավան	91000	91200	91200
	Սպիտակ	114000	114050	114050
	Ալավերդի	50200	50300	50300
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157100	157350	157350
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	119000	119250	119250
	Արթիկ	63100	63450	63450
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130050	130050
	Կապան	100500	100750	100750
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84650	84650
	Ագարակ	46900	46950	46950
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90050	90150	90150
	Եղեգնաձոր	116600	116750	116750
	Ջերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	115000	115650	115650
	Իջևան	123200	123250	123250
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի հունիսի համեմատ՝ մնացել է անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի հուլիսին հանրապետությունում օտարվել է 1370 միավոր (504.75 հա) հող, որից Երևանում՝ 63 միավոր (6.95 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 864 միավոր (466.04 հա), որից Երևանում՝ 6 միավոր (1.65 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 339 միավոր (28.69 հա), որից Երևանում՝ 29 միավոր (2.81 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 104 միավոր (6.18 հա), որից Երևանում՝ 20 միավոր (2.07 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 28 միավոր (2.17 հա), որից Երևանում՝ 8 միավոր (0.41 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 5 միավոր (0.93 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 30 միավոր (0.73 հա):

2016 թվականի հուլիսին հանրապետությունում օտարված հողերից 1156 միավորի (411.17 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 49 միավոր (4.29 հա), նվիրատվության գործարք՝ 207 միավորի (91.17 հա), որից Երևանում՝ 12 միավոր (1.98 հա) և փոխանակության գործարք՝ 7 միավորի (2.41 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.68 հա):

Հանրապետությունում 2016 թվականի հուլիսին, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 13.9 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 6.2 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 15.3 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 55.5 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արագածոտնի մարզում՝ 84.23 հա, որից 80.49 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 20.7 %-ը կամ 239 միավորը (84.67 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 14 միավոր (1.05 հա), իսկ 78.4 %-ը կամ 906 միավորը (326.26 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 35 միավոր (3.23 հա): 2016 թվականի հուլիսին հանրապետությունում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 11 գործարք /0.23 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարք:

Ստորև ներկայացված է 2016 թվականի հուլիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մավերես (հա)	Միավոր	Մավերես (հա)	Միավոր	Մավերես (հա)	Միավոր	Մավերես (հա)	Միավոր	Մավերես (հա)	Միավոր	Մավերես (հա)	Միավոր	Մավերես (հա)	Միավոր	Մավերես (հա)
Երևան	0	0.00	0	0.00	7	0.50	7	0.55	6	1.65	8	0.41	13	0.57	8	0.60
Արագածոտն	16	35.86	3	0.19	6	0.25	8	0.28	43	44.63	0	0.00	26	3.02	0	0.00
Արարատ	15	10.90	1	0.10	9	0.06	3	0.04	51	20.19	2	0.22	41	3.23	1	0.01
Արմավիր	1	0.93	2	0.32	2	0.06	5	0.15	74	37.96	0	0.00	47	4.85	1	0.004
Գեղարքունիք	4	3.18	4	0.36	3	0.07	9	0.69	162	44.99	0	0.00	8	0.86	2	0.14
Լոռի	3	2.70	1	0.01	4	0.02	2	0.01	161	60.28	0	0.00	10	1.30	2	0.12
Կոտայք	16	10.83	0	0.00	20	1.54	6	0.06	80	31.59	1	0.12	44	3.19	11	0.58
Շիրակ	1	0.10	0	0.00	2	0.06	1	0.002	14	15.66	2	0.19	4	0.20	1	0.01
Սյունիք	10	5.46	3	0.12	2	0.05	3	1.01	18	18.98	0	0.00	7	0.38	9	0.16
Վայոց ձոր	10	5.33	0	0.00	0	0.00	2	0.003	23	25.05	0	0.00	5	0.36	3	0.06
Տավուշ	11	1.77	0	0.00	5	0.21	4	0.19	5	3.15	0	0.00	8	0.67	0	0.00
Ընդամենը	87	77.06	14	1.10	60	2.82	50	2.99	637	304.13	13	0.94	213	18.63	38	1.68

Ստորև ներկայացված է 2016 թվականի հուլիսին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մավերես (հա)	Միավոր	Մավերես (հա)	Միավոր	Մավերես (հա)	Միավոր	Մավերես (հա)	Միավոր	Մավերես (հա)	Միավոր	Մավերես (հա)	Միավոր	Մավերես (հա)	Միավոր	Մավերես (հա)	Միավոր	Մավերես (հա)
Երևան	8	0.51	0	0.00	5	0.44	3	0.07	6	0.54	0	0.00	0	0.00	2	0.06	4	0.48
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	33	36.58	16	35.86	3	0.19	6	0.25	8	0.28
Արարատ	2	0.04	0	0.00	2	0.04	0	0.00	25	8.99	14	8.83	1	0.10	7	0.02	3	0.04
Արմավիր	4	0.17	0	0.00	1	0.04	3	0.13	6	1.29	1	0.93	2	0.32	1	0.02	2	0.02
Գեղարքունիք	6	0.03	0	0.00	0	0.00	6	0.03	14	4.26	4	3.18	4	0.36	3	0.07	3	0.65
Լոռի	6	0.03	0	0.00	4	0.02	2	0.01	4	2.71	3	2.70	1	0.01	0	0.00	0	0.00
Կոտայք	4	0.04	0	0.00	3	0.01	1	0.03	38	12.40	16	10.83	0	0.00	17	1.54	5	0.03
Շիրակ	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	3	0.16	1	0.10	0	0.00	2	0.06	0	0.00
Սյունիք	4	0.42	0	0.00	2	0.05	2	0.37	14	6.22	10	5.46	3	0.12	0	0.00	1	0.64
Վայոց ձոր	1	0.001	0	0.00	0	0.00	1	0.001	11	5.332	10	5.33	0	0.00	0	0.00	1	0.002
Տավուշ	2	0.03	0	0.00	2	0.03	0	0.00	18	2.14	11	1.77	0	0.00	3	0.18	4	0.19
Ընդամենը	38	1.27	0	0.00	19	0.63	19	0.64	172	80.62	86	74.99	14	1.10	41	2.20	31	2.33

2016 թվականի հուլիսին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 1 գործարք (2.07 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2016 թվականի հուլիսին, 2015 թվականի հուլիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 25.6 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 40.0 %-ով, իսկ մարզերում՝ 25.0 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 4.4 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 30.5 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 55.1 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 75.0 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի հուլիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	13	34.62	128.5	704.9	407.9	25	35.69	365.0	12000.0	3345.0
Ապարան	2	1.15	70.1	70.1	70.1			86.5	2727.3	630.0
Թային	1	0.09	450.0	450.0	450.0	14	4.84	93.6	5494.5	732.5
Ծաղկահովիտ						2	3.79	79.5	1000.0	395.0
Արարատի մարզ										
Արտաշատ						22	5.77	335.1	10833.3	2719.0
Մալիս	3	1.86	72.7	438.1	198.3	16	7.40	200.0	11904.8	3305.0
Վեդի	11	6.96	71.4	313.7	186.1	12	6.91	207.0	10795.1	1975.1
Արմավիրի մարզ										
Արմավիր						37	22.96	294.3	9090.0	1365.5
Բաղրամյան						2	0.65	90.6	2561.1	910.0
Վաղարշապատ	1	0.93	71.0	71.0	71.0	29	11.43	444.4	11764.7	1945.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	0.16	500.0	500.0	500.0	155	40.41	199.8	1875.0	505.0
Ճամբարակ								60.5	953.3	352.0
Մարտունի						4	0.29	51.1	2850.0	775.0
Սևան	3	3.02	180.0	187.5	185.0			52.2	2134.8	355.0
Վարդենիս						3	4.29	41.2	2575.1	391.5
Լոռու մարզ										
Ալավերդի						1	1.00	170.4	6424.2	560.0
Գուգարք	1	1.25	170.0	170.0	170.0	2	0.74	234.6	6065.9	810.0
Սպիտակ								250.0	5555.5	675.0
Ստեփանավան						4	2.26	90.6	1686.6	415.5
Տաշիր	2	1.45	169.7	536.5	353.1	154	56.28	45.3	1384.4	185.0
Կոտայքի մարզ										
Արուլյան	10	7.08	75.0	663.6	251.7	17	5.40	279.3	11942.7	4010.0
Եղվարդ	6	3.75	74.2	1460.3	558.4	54	21.85	174.4	11971.8	2535.5
Հրազդան						8	4.06	130.5	10256.4	975.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	0.10	514.7	514.7	514.7	5	4.76	252.0	1693.1	655.5
Ամասիա								40.9	261.0	136.5
Անի						6	9.50	110.6	546.9	454.5
Աշոցք								58.5	215.8	138.5
Արթիկ						3	1.40	79.4	1428.6	515.0

Սյունիքի մարզ										
Գորիս						3	4.58	92.6	1023.2	780.0
Կապան	1	1.02	333.5	333.5	333.5	1	1.04	120.0	841.6	448.3
Մեղրի	7	3.26	73.6	713.0	367.5	5	1.15	193.0	3000.0	810.0
Սիսիան	2	1.18	136.5	143.5	140.0	9	12.22	46.3	1977.4	580.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						6	0.58	125.0	10000.0	1770.0
Վայք	10	5.33	16.7	704.0	195.6	17	24.46	58.8	1430.7	607.5
Տավուշի մարզ										
Բերդ						2	0.64	213.3	3783.8	690.0
Իջևան	3	0.63	154.7	167.9	159.1	3	2.51	267.5	9454.5	1530.0
Նոյեմբերյան	8	1.14	150.5	3066.3	769.7			46.7	7368.4	985.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի հուլիսին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	4	1130.0	2288.7	5714.3	4195.3	19	16649.0	130.7	22200.0	2591.0
Ապարան	1	577.0	122.1	122.1	122.1	4	4946.0	124.1	609.6	389.3
Թալին	1	802.0	77.4	77.4	77.4	1	1875.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						2	6709.0	60.0	214.3	93.5
Արարատի մարզ										
Արտաշատ						12	11467.1	173.9	7140.3	905.6
Մասիս	7	226.0	3154.3	4011.4	3552.0	23	15439.7	187.5	25000.0	1208.5
Վեդի						6	5409.0	126.1	5000.0	663.8
Արմավիրի մարզ										
Արմավիր						16	17769.0	131.6	9090.9	1215.5
Բաղրամյան						2	2400.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	1	195.0	554.9	554.9	554.9	29	28282.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	1660.0	186.6	1084.3	683.6
Ճամբարակ								71.3	2286.2	146.8
Մարտունի	2	700.0	359.1	359.1	359.1	5	3385.0	119.3	5000.0	280.0
Սևան	1	47.3	1337.2	1337.2	1337.2			240.0	3110.4	345.0
Վարդենիս						2	3507.6	72.5	987.2	150.5
Լոռու մարզ										
Ալավերդի						2	2720.0	114.3	1388.9	217.0
Գուգարք						3	2326.4	77.9	14083.3	1259.0
Սպիտակ								104.9	1348.3	198.3
Ստեփանավան						4	6530.0	88.2	1666.7	175.5
Տաշիր						1	1400.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	15	14621.8	632.3	5433.3	3086.4	23	14763.8	264.5	35353.5	1951.0
Եղվարդ	1	184.8	2612.6	2612.6	2612.6	20	16720.0	173.6	27000.0	2854.5

Հրազդան	1	567.0	278.3	278.3	278.3	1	400.0	117.7	34848.5	1318.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	640.0	3150.0	5500.0	4325.0	2	1255.9	113.6	18750.0	332.1
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի								67.9	180.6	210.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ						2	789.3	111.8	5000.0	217.5
Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	367.4
Կապան						4	2217.0	67.9	2638.9	360.0
Մեղրի						1	40.0	68.5	632.9	270.0
Սիսիան						2	1573.0	123.5	875.0	252.5
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						3	3590.0	96.7	7659.6	505.8
Վայք						2	36.0	120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	127.3
Իջևան	2	1400.0	1366.2	3000.0	2183.1	7	5750.3	74.1	14423.1	512.4
Նոյեմբերյան	1	400.0	126.5	126.5	126.5	1	920.0	125.0	1948.1	252.0

2016 թվականի հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 583 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.2 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 79.2 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2016 թվականի հուլիսին, 2016 թվականի հունիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 12.5 %-ով, իսկ 2015 թվականի հուլիսի համեմատ՝ 5.8 %-ով:

2016 թվականի հուլիսին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 33 բնակարանի, 41 անհատական բնակելի տան, 256 հասարակական և 74 արտադրական նշանակության օբյեկտի, 161 հողի, 17 ավտոտնակի և 1 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, սերվիտուտի և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2016 թվականի հուլիսին Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 11 վարձակալության գործարքի քանակը 2016 թվականի հունիսի համեմատ աճել է 3.7 անգամ, իսկ 2015 թվականի հուլիսի համեմատ՝ 57.1 %-ով:

2016 թվականի հուլիսին հանրապետությունում վարձակալված 137.45 հա հողից 3.37 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 134.09 հա հողերից 124.18 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 6.16 հա արդյունաբերական օբյեկտների, 0.01 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Գեղարքունիքի մարզում՝ 57.35 հա, որից 57.10 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1779 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 12.7 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016 թվականի հունիսի համեմատ, նվազել է 3.2 %-ով, իսկ 2015 թվականի հուլիսի համեմատ՝ աճել 0.2 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (53.0 %), անհատական բնակելի տների (21.0 %), հասարակական նշանակության օբյեկտների (10.8 %) և հողերի (8.5 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 990 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016 թվականի հունիսի համեմատ նվազել է 3.2 %-ով, իսկ 2015 թվականի հուլիսի համեմատ՝ աճել 0.3 %-ով:

2016 թվականի հուլիսին հանրապետությունում գրավադրվել է 2411.76 հա հող, որից 4.56 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 98.4 %-ը կամ 2372.81 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Արմավիրի մարզում՝ 2296.07 հա, որից 2295.78 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2016 թվականի հուլիսին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 159 գործարք: 2016 թվականի հուլիսին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի հունիսի համեմատ, նվազել է 2.4 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 4.2 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 111 գործարք, որը 2016 թվականի հունիսի համեմատ աճել է 14.4 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 4.7 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի հունիսի համեմատ, աճել է 27.3 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 20.0 %-ով :

2016 թվականի հուլիսին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 1608 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2016 թվականի հունիսի համեմատ, նվազել է 19.0 %-ով, իսկ 2015 թվականի հուլիսի համեմատ՝ 10.8 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 11.5 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (23.5 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե